

## ԵՍՀԿ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԻՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՈՒՄԸ

ԵՍՀԿի ղեկավարությունը հրապարակած է Հայաստանի Մայիս 25ի խորհրդարանական ընտրություններում մասին իր վերջնական գեկուցումը, որում մեջ նշած է, թե հետագային ժողովրդավարական ընտրություններու կայացման համար պետք է քարտեփոխուի Հայաստանի ընտրական օրենսդրությունը: Ձեկուցումը դիտել տուած է, թե իշխանությունները պետք է ջանք չխնայեն վերացնելու համար անպատասխանատուութեան մթնոլորտը: ԵՍՀԿի գեկուցումը ընդգծած է, թե բաղդատմամբ նախագահական ընտրություններուն, խորհրդարանական ընտրություններուն արձանագրուած է որոշ քարտեփոխում, յատկապէս նախընտրական քարտեփոխումի մթնոլորտի առումով:

## ԲԱՆԱԿԻ ԸՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՆՇՈՒԵՑԱԻ ԸԱՆԴԻՍԱԿՈՐԱՊԵՍ

Նախագահ Կ.Ս. Էմիլ Լախուտ երէկ հաստատեց, որ իւր քաղաքացիական հաստատութեան ղեկավար պետք է անպայման յարգէ իր պատասխանատուութիւնը եւ քաղաքական, տնտեսական, ընկերային թէ ապահովական մարզերէն ներս կատարէ իր պարտականութիւնները:



Նախագահ Լախուտ ընդգծեց, որ հարկ է միշտ դրական լուծումներ գտնել երկրին մէջ ծագած հարցերուն եւ չզբաղիլ տրամադրութիւններ քանդող յաւելելու հարցերու ստեղծումով: Ան նկատել տուաւ, որ իր քաղաքացիական կեցածքը յստակ է Իրաքի եւ Պաղեստինի շուրջ եւ աւելցուց, որ միջազգային թէ շրջապային տագնապներուն լուծումները պետք է ըլլան արդար եւ օրինական:

Նախագահ Լախուտ երէկ հովանաւորեց իր քաղաքացիական հիմնադրութեան տօնակատարութիւնները, որ կայացաւ Ֆրանսիայի Սայայից վարժարանին մէջ: Պաշտօնական տօնակատարութեան ներկայ գտնուեցան նաեւ վարչապետ Ռաֆիկ Նաբիբի, ինչպէս նաեւ նախարարներ Սեպուհ Յովսէփեան, Ասատ Տիպալ, Միշէլ Սըմահա, Ֆուատ Միհրոբ, Ալուպ Հրամայեմ, Միշէլ Մուսա, Մահմուտ Համմուտ, Էլիաս Մրր, Ապտալա Ֆարիս եւ Ալի Սալի, տօնակատարութեան

վայր հասաւ ժամը 9:00ին եւ հովանաւորեց 146 նոր սպաներու սուրբնու տուչութիւնը, անոնց սերունդը կոչելով նախատակ զինուորական ժառանգարի անունով: Շրջանաւարտ սպաներուն ուղղած իր խօսքին մէջ նախագահ Լախուտ քաւ, որ քանակը կը կրէ երկրին պաշտպանութեան շարք՝ էջ 2

## ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՒ ՔԱՐՏԵՍԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԿԸ ԴԻՄԱԳՐԱՒԷ

Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ յարաբերութիւնը աւելի եւս քարճարացաւ երէկ՝ խաղաղութեան ճամբու քարտեփոխ գործադրութեան հարցով, Ուաշինկթընի մէջ կայացած բանակցութիւններէ ետք, որոնց ընթացքին որեւէ նուաճում կարելի չէր եղած արձանագրել: Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն պոչուցուցած է, թէ իր կառավարութիւնը պաղեստինեան նուազագոյն բնաբարումն անգամ պիտի չհանդուրժէ: Պաղեստինցիք մինչ այդ յայտնած են, թէ Շարոնի կառավարութիւնն է, որ կը մերժէ առնել առաջին քայլերը, որոնք անհրաժեշտ են, ըստ Եւրոպական Միութեան, Ռուսիոյ, ՄԱԿի եւ Մ. Նախագահներու կողմէ մշակուած խաղաղութեան ծրագիրին: Իսրայէլեան լրատուաբանութիւնը համաձայն, Շարոն դիտել տուած է, որ ճամբու



քարտեփ գործադրութեան «առաջին հանգրուանին» սկսած են սկստաւարութեան կր գտնուիլը, շեշտելով, որ անիկա հիմնուած է զինադուլի մը եւ «վարչապետութեան, ախարկչութեան եւ գրգռութեանց ամբողջական շարք՝ էջ 10

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԱՐԵՑ ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ԵԿԱԻԵԱՆԸ

Իբրեւ գնահատանք Սփիւռքի ու Հայաստանի մէջ հայ կրթական ու մշակութային կեանքի ծաղկումին Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկի քերթած նպատակն է անոր իրագործման մէջ հիմնարկին Հայկական Բաժնի տնօրէն դոկտ. Զաւէն Եկաւեանի ունեցած ներդրումին, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կայմակերպած էր գնահատանքի ու մեծարանքի հանդիսութիւն մը: Պաշտօնական հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ, 1 Օգոստոսի երեկոյեան ժամը 7:00ին, կաթողիկոսարանի վեհարանի դահլիճին մէջ: Հանդիսավար Նորայր Օ. Վրդ. Աշրգեան բացման խօսքին մէջ շեշտել է տք Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկին Հայկական Բաժնի ունեցած անգնահատելի ծառայութիւնը հայկական կրթական ու մշակութային կեանքերու բարգաւաճման մէջ, վեր առաւ անոնց պարագումուն մէջ դոկտ. Զաւէն Եկաւեանի եւ Հայկական Բաժնի փոխ տնօրէն Աստղիկ Չանքրըթընի անուրանալի դերակատարութիւնը: Խօսք առաւ Ժիրայր Գանիէյեան, որ կեդրոնացաւ յատկապէս հաստատութեան կրթական առաքելու-




թեան վրայ: Ան կարեւորեց Հայաստանի մէջ եւ աշխարհի տարածքին աւելի քան 70 երկիրներու մէջ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկին եւ մասնաւորապէս Հայկական Բաժնի ծառայութիւնները, որոնք ուղղուած են հայկական Սփիւռքի բոլոր համայնքներուն անխտիր եւ որոնք կը հետապնդեն մէկ գլխաւոր նպատակ՝ տարածուած հայ կրթութեան ու մշակութային թուլութեան նպաստակին իրագործման ի խնդիր կատարումը կառուցումները, շինարարական աշխատանքները, հաստատում կեդրոններն ու հիմնուած կրթական ստանները: Ան

արժեւորելով հաստատութեան ինստիտուտը ծառայութիւնը, քաւ. «Անվարան կարելի է յայտարարել, որ սփիւռքահայ դպրոցին թիկունք կանգնող ու անոր գոյութիւնը պահովող կառոյցն է Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկն ու անոր Հայկական Բաժնի»: Ժիրայր Գանիէյեան իր խօսքին մէջ մեծ կարեւորութեամբ շեշտեց իր քաղաքացիական պարտականութիւնը: «Քաջ գիտակից հայկական վարժարաններու գոյութեան հրամայականին, Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկն ու անոր փոխ տնօրէնը կը գործեն անսակարկ օժանդակութեան եւ խնամատար հոր ոգիով», քաւ: Զաւէն Եկաւեան

## ՍԱՏՏԱՄՆՈՐ ՊԱՏԳԱՄ ՄԸ ՅՂԵՑ ԻՐԱԲՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Պատկերասփիւռի «ժպիտ» կայանը երէկ սփռած է ենթադրաբար Սատտամ Հիւսէյնի՝ իրաքցի ժողովուրդին յղուած մէկ պատգամը, որ նուազ քան մէկ ամսուան մէջ անոր վերաբերած սփռուած վեցերորդ պատգամն է: Ան կոչ ուղղած է իրաքցիներուն, որ պահպանեն պետութեան եւ իր տապալած Պասս Կուսակցութեան ունեցուածքները՝ «մինչեւ որ կացութիւնը դարձեալ բնականոն դառնայ»: Յայտարարելով հանդերձ, որ միայն դիմադրութիւնը վերջ կրնայ տալ Իրաքի ամերիկեան բռնագրաւումին, ան ըսած է, թէ իրաքցիք պետք է «անձնատուր եղող» եւ զօր պիտուրի հետ վարուին համաձայն միջազգային օրէնքներուն եւ իսլամութեան թելադրանքներուն: Ի տարբերութիւն անցող ամսուան ընթացքին Սատտամի վերագրուած պատգամներու մեծամասնութեան, երէկուան պատգամը անհասկնալի բաժիններ ունեցած է: Խօսողին համաձայն, ձայներիկը պատրաստուած է Յուլիս 27ին: Ան ակնարկած է նաեւ տապալած վարչակարգի հիմնարկութիւններուն, որոնց կարգին՝ Պասս Կուսակցութիւնը եւ իշխող Յեղափոխական Հրամանատարութեան խորհուրդը, ըսելով, թէ անոնք կը շարունակեն գոյատեւել: Մինչ այդ, երկրին մէջ բիրտ արարքներ կը շարունակեն մագլցում արձանագրել: Ամերիկեան բանակին համաձայն, երէկ իրաքցի 4 տղամարդ սպանուած է եւ ամերիկացի 3 զինուորներ թէթեօրէն վիրաւորուած են, Ֆալուճ քաղաքին մօտ ամերիկեան ուժերու դէմ անջատ յարձակումներու ընթացքին: Իրաքցիները սպաննուած են ամերիկեան կարաւանի մը վրայ հրթիռով արձակուող ձեռնառումի մը պայթումի հետեւանքով: Ամերիկեան ուժերը 9 հոգի ձերբակալած են: Միւս կողմէ, լեհական ուժերու դէմ կրակ բացուած է Պաղատի մօտակայ Վիլ շրջանին մէջ, առանց մարդկային վնաս պատճառելու: Առաջին անգամ ըլլալով էր, որ այդ ուժերուն վրայ յարձակում տեղի կ'ունենար: Աւստրալիա մինչ այդ երէկ յայտարարած է, թէ իր ուժերը, որոնք Մարտին ամերիկեան զինուորութեամբ յարձակումին մասնակցած էին՝ Սատտամի վարչակարգը տապալելու համար, հաւանաբար մօտիկ ապագային տուն պիտի չվերադառնան: Այլ գիծի վրայ, հիւսիսային Իրաքի Պայճի քաղաքին մօտ քարիւղատար խողովակ մը Հիւզ-Չաքթի գիշեր խափանարարական արարքի մը ենթարկուած է: Տեղի ունեցած պայթումին պատճառով ծայր տուած է հրդեհ մը: Բարձրաստիճան նստիկան մը ըսած է, թէ Սատտամի հետեւորդ զինեալներ կամ ոճրա-



գործներ պետք է այսպէս պայթումին համար: Տակաւին Հինգշաբթի օր, դաշնակիցները յայտարարած էին, թէ Իրաքի հիւսիսային քարիւղատար գլխաւոր խողովակը, որ նիւթական մեծ վնասներու ենթարկուած էր Յունիս 12ին տեղի ունեցած խափանարարական գործողութեան մը պատճառով, քանի մը օրէն դարձեալ գործօն պիտի դառնայ: Բանալի խողովակը քարիւղ կ'արտադրէր դէպի թրքական ձեյիան նախահանգիստը: Զաւէն Եկաւեան



ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ ՌՄԲԱՆԱՐՈՒՄԻ ԅԱՋՈՐԴԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԴԵՊՔԵՐ ԱՆԳԱՐԱ, 1 (ԱՅՖ).— Թուրք 17 ոստիկաններ վիրաւորուած են Ուրբաթ օր, երբ արդարադատութեան նախարարութեան շէնքին առջեւ յարուած ռուճը մը պայթած է, մինչ անոնք գայն կը քննէին, ըսած են պաշտօնատարները: Ոստիկանութեան պետը յայտնած է, թէ ձախակողմեան ընդլայնակեց խմբակ մը ստանձնած է պայթուածին պատասխանատուութիւնը, մերժելով սակայն խմբակին անունը յայտնելը: Պայթուցիկ նիւթեր պարունակող պայուսակը գետեղուած էր Անգարայի մէջ երկրասարգ դատաւորներու եւ դատախազներու մարզումի մէկ կեդրոնին մէջ, յայտնած է ոստիկանապետը: Բանի մը վարչական առաջ նման պայուսակ մը պայթած էր եւ ոստիկանները ղէպքին վայրը կանչուած էին քննութիւն տանելու համար, լրացարած է Կոթան Ալաիէն: «Անատոլի» լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ ոստիկանները նախագրուչական որեւէ միջոցառում չէին զինած՝ պաշտպանող յատուկ տարագ. սպանութիւններու գօտիի հաստատում, եւ այլն: Առաջին պայթումը գոհ չէ իրած:



# ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԱՐԵՑ...

Շարունակում Ա. Էջեց

Իր խօսքին աւարտին, ժիրայր Գանիէլեան գնահատեց ղոկոտ. Չաւէն Եկեանի աւելի քան քսանամեայ նուիրումը և արտայայտեց անհուն երախտագիտութեան պագուններ:

Ապա խօսք առաւ Գեղանի Էթիմէպեան, որ կեդրոնացաւ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկին եւ անոր Հայկական Բաժինին մշակութային առաքելութեան վրայ: Ներկայացնելէ ետք Կիւլպէնկեան գերդաստանին եւ Գալուստ Կիւլպէնկեանի կենսագրականները, ան շեշտեց անոնց նախաձեռնութեան եւ ձեռնարկութեան ոգին, ինչպէս նաեւ նկարագրի բարեփոխութեան գիծը: Ան ըստ, որ բնութեան, մշակոյթի եւ արուեստի նկատմամբ Գալուստ Կիւլպէնկեանի սերնդն ու նուիրումը նպատակ ունեցաւ ծանայել նաեւ ար-

ի ր ա կ ա ն ա ց մ ա ն : Շնորհիւ Հայկական Բաժինին եւ անոր տնօրէնին ձեռնարկութեան, ծաղկեցաւ, կեանքի կոչուեցաւ հայ մշակութային հայտնի արտայայտիչը, ըստ ան է շեշտեց, որ հայ նորահաս սերունդը հայ մշակութային հետաքրքրուելու ու համաշխարհային մտահոգութիւններուն յուժուներ գտնող հաստատութիւնը եղաւ Գալուստ Կիւլպէնկեանը:

Հայրապետական պատգամով հանդէս եկաւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս, որ երանելի կոչեց այն մարդը, որ կ'աշխատի ուրիշին համար՝ Աստուծոյ բարիքը առատօրէն բաժնելով ուրիշին հետ: «Այդպէս եղաւ կեանքը Գալուստ Կիւլպէնկեանի անձին եւ հաստատութեան եւ այդպիսով ան անձերու, հաւաքականութիւններու եւ կազմակերպութիւններու կեանքին մէջ տիրական ներկայութիւն է: Մեր ազգին կեանքին մէջ եւս ան եղաւ ու մնաց հոմանիշ դարձութեան, գիտութեան ու մշակոյթին», ըստ ան:

Վեհափառը նշեց, թէ այս հասնողիւնը վկայութիւն մը կ'ուտայ հաստատութեան Հայկական Բաժինին նուիրումին եւ իրագործումին:

«Եկած ենք արտայայտելու հաւաքական յարգանքը՝ վաւերական, նպատակայայտ ծանայութեան, որ ծաղկեցուց մեր մշակութային ու դպրական կեանքը», ըստ ան է շեշտեց, որ այդ բոլորին մէջ ղոկոտ. Չաւէն Եկեանն ունի իր որոշակի դերը եւ առանցքային ներկայութիւնը: «Սակ տնօրէնները, գրական ամսագրերն ու գիտական կաճառները: «Այս գործունէութիւնը մեծապէս նպաստեց հայկական բարեփոխական ու մշակութային մասնագիտական աշխատութիւններու

ստրեան արժանի ազգային, կրօնական եւ մշակութային հիմնարկին ունեցած ներդրումին:

«Հիմնարկը քարին չէ, որ կու տայ, որովհետեւ, գիտէ, որ այդ քարերը կը վերածուին ծառայութեան: Կու տայ առանց խտրութեան բոլորին՝ պահանջելով միայն պատասխանատուութիւն», ըստ ան:

Վեհափառը նաեւ գնահատեց ներդրումը Հայկական Բաժինի փոխ տնօրէն եւ հաստատութեան մէջ հայկական դպրոցներու պատասխանատու Աստղիկ Չանքրըբընը, որ ուժակալ կերպով անձին եւ հաստատութեան եւ այդպիսով ան անձերու, հաւաքականութիւններու եւ կազմակերպութիւններու կեանքին մէջ տիրական ներկայութիւն է: Մեր ազգին կեանքին մէջ եւս ան եղաւ ու մնաց հոմանիշ դարձութեան, գիտութեան ու մշակոյթին», ըստ ան:

Վեհափառը նշեց, թէ այս հասնողիւնը վկայութիւն մը կ'ուտայ հաստատութեան Հայկական Բաժինին նուիրումին եւ իրագործումին:

«Եկած ենք արտայայտելու հաւաքական յարգանքը՝ վաւերական, նպատակայայտ ծանայութեան, որ ծաղկեցուց մեր մշակութային ու դպրական կեանքը», ըստ ան է շեշտեց, որ այդ բոլորին մէջ ղոկոտ. Չաւէն Եկեանն ունի իր որոշակի դերը եւ առանցքային ներկայութիւնը: «Սակ տնօրէնները, գրական ամսագրերն ու գիտական կաճառները: «Այս գործունէութիւնը մեծապէս նպաստեց հայկական բարեփոխական ու մշակութային մասնագիտական աշխատութիւններու



Ինկրիտ Եկեանցի պարգեւատրումը

մենք կարիքը ունինք հաւատքի, որպէսզի աւելի քան արժանաւոր ին խորանան մեր յարաբերութիւնները: Ան շեշտեց Սփիռոքի հայտնի ինքնապատկերը: «Ստրիկոս համար Միջին Արեւելքի եւ յատկապէս Լիւնայի հայոց համայնքներուն ներկայացուցած կարեւորութիւնը, հայ դպրոցին անհրաժեշտութիւնը եւ կոչ ուղղեց Եկեանին, որ տարիներ շարունակ նեցուկ կանգնած է իր ամուսինին գործունէութեան: «Ահաւասիկ երեք անձեր, որոնք կ'ապրին ու կը տագնապին ուրիշին համար, եւ այդ ուրիշը մենք ենք՝ ազգը, հայրենիքը, եկեղեցին եւ մշակոյթը: Գանձեր, առանց որոնց մեր կեանքը աղքատ է», եզրափակեց վեհափառը:

Ապա Արամ Ա. կաթողիկոս ղոկոտ. Չաւէն Եկեանը պարգեւատրեց Կիլիկիոյ կաթողիկոսութեան իշխան շքանշանով, Աստղիկ Չանքրըբընը՝ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ Ինկրիտ Եկեանին նուիրեց մշակութային ու գեղարուեստական յատուկ արժէք ներկայացնող յուշանուէր մը:

Երախտագիտութեան ու շնորհակալութեան յուշանուէր յայտնեց Գեղանի Էթիմէպեանը ըլլաւ մեր ամենօրեայ օրհնութիւնները, որովհետեւ այս աշխատանքին համար

## السفير الديار المستقبل الاصحاح

### ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱՔԵՐԹԵՐԸ

Լիբանանեան կաթողիկոսութեան առջի օրուան նիստին քննարկումները եւ իբրանանեան ներքին քաղաքական այլ իրադարձութիւններ, Իրաքի մէջ տեղի ունեցող վերջին իրադարձութիւնները, Սատտամ Հիւսէյնի երկու դուստրերուն Յորդանան ապաստանելու տեղեկութիւնը, ինչպէս նաեւ գրաւեալ Պաղեստինի մէջ տիրող ներկայ կացութիւնը կը հանդիսանան Ուրբաթ, 1 Օգոստոսին լոյս տեսած իբրանանեան օրաքերթերուն գլխաւոր նիւթերը:

Այսպէս, անդրադառնալով Հինգշաբթի օրուան կառավարութեան նիստին, «Տիւրք» օրաքերթը կը գրէ, թէ ժողովի ընթացքին նախարարներ Արիստի եւ Սըմահայի միջեւ տարբարանալէ մը ստեղծուած է տեղեկութեան նախարարութեան պաշտօնէութեան յանձնարարական Բաժինը ստեղծուած է յատկապէս հայ դպրոցի պահպանութեան, հայ ուսուցիչներուն օգնութեան հասնելու եւ հայ մանկավարժներ պատրաստելու համար», շեշտեց ան:

Իր խօսքի աւարտին, ղոկոտ. Չաւէն Եկեան իր խորին շնորհակալութիւնը յայտնեց մեծարանքի հանդիսութեան համար եւ վեհափառ հոր նուիրեց կաթողիկոսական սաս:

Հանդիսութեան ընթացքին գործարկուեցաւ գեղարուեստական յայտագիր. հանդէս եկան մենեքոզի Գէրգը Պէպէճեան եւ ամուսնորդ Իրմա Տէտեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Մարդաբար» յաղթերգով:

«Անուար» օրաքերթը կը նշէ, թէ երկրի քաղաքական կեանքի արձակուրդին պուրբնաց, կառավարութիւնը ինքզինքն արձակուրդ կու տայ եւ այս ձեւով առկա կը պահէ քաղաքացիները մտահոգող ընկերային - տնտեսական հարցերուն քննարկումը:

ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը մի քանի օրուան ընթացքէ ետք կարծազէ կարաւային Լիբանանի մէջ գործող «Ֆիւնիլ» ռոմերուն առաջնանեան օրաքերթերուն ժամկետը եւ մտահոգութիւն արտայայտեց օղային, ծովային թէ ցամաքային անցքերէն սահմանային գիծի մնալուն խախտումներուն կապակցութեամբ, այս կողմէ փոխանցած է «Նահար» օրաքերթը:

Նոյն թերթը կարճ լրատուութեամբ մը հաղորդած է, թէ Իւրաքէ տեղեկութեան նախարարութեան պաշտօնէութեան յանձնարարական Բաժինը ստեղծուած է յատկապէս հայ դպրոցի պահպանութեան, հայ ուսուցիչներուն օգնութեան հասնելու եւ հայ մանկավարժներ պատրաստելու համար», շեշտեց ան:

«Անուար» անդրադառնալով Իրաքի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն կը հաղորդէ, թէ Պաղեստինի օրակայանին մէջ ամերիկեան զինուորական բեռնակառքի մը տակ պայթած աւազի մը պատճառով բանտարկեցի երկու զինուորական սպանուած են եւ հինգ ուրիշներ վիրաւորուած, իսկ Սատտամ Հիւսէյնի երկու դուստրերը հասած են Յորդանան:

«Մաֆի» օրաքերթը կը գրէ, թէ Իրաքի մէջ ամերիկեան բռնազրնուած ուժերը իրաքեան ընդդիմութիւնը կ'առնչեն «Քալիստ» կազմակերպութեան հետ, եւ կ'ըսեն, թէ շատ հաւանաբար «Քալիստ»-ի անդամներ կը գտնուին Իրաքի մէջ:

Շարունակելով

անդրադառնալ Իրաքի ներքին քաղաքական կացութեան, «Նահար» կը գրէ, թէ ամերիկեան ուժերը կը խոստովանին, որ իրենց դէմ արձանագրուող դիմադրութեան գործողութիւնները հետպետէ մագրուում կ'արձանագրեն, իսկ Իրաքի ամերիկացի կառավարիչ Փօլ Պրեմըրը կը խօսի մէջ տարի ետք Իրաքի մէջ ժողովրդային ընտրութիւններ կազմակերպելու հաւանականութեան մասին:

«Անուար» օրաքերթը կը տեղեկացնէ, թէ սուրիական բանակի հիմնադրութեան օրուան առիթով Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ «ժէյշ եւ Շապապ» եւ «ժունտի Արապի» անասերթերուն տուած հարցալուրջի մը մէջ ըսած է, թէ «ընթացիկ կացութիւնները կ'ենթադրեն արթնութիւն եւ պատրաստութիւն եկող մարտահրաւերները դիմագրաւելու համար»:

«Մաֆի» օրաքերթը կը նշէ, թէ Իւրաքի վարչապետ Արիէլ Շաւրն կը ղոմէ իր խոստումները «խաղաղութեան ճամբու քարտէսին իրագործման ժամանակացոյցը յարելու իմաստով. Կապալի մէջ տեղի կ'ունենայ բնակեցման վարչերու ընդարձակում:

«Անուար» կը հաղորդէ իւրաքեան ծովային բեռնակառքի մը տակ պայթած աւազի մը պատճառով բանտարկեցի երկու զինուորական սպանուած են եւ հինգ ուրիշներ վիրաւորուած, իսկ Սատտամ Հիւսէյնի երկու դուստրերը հասած են Յորդանան:

«Մաֆի» օրաքերթը կը գրէ, թէ Իրաքի մէջ ամերիկեան բռնազրնուած ուժերը իրաքեան ընդդիմութիւնը կ'առնչեն «Քալիստ» կազմակերպութեան հետ, եւ կ'ըսեն, թէ շատ հաւանաբար «Քալիստ»-ի անդամներ կը գտնուին Իրաքի մէջ:

Շարունակելով

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՂՈՒՆՆ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- 9:30.- Զաղաքական լուրեր / հայերէն
- 9:40.- Առաւօտեան տոնս
- 10:00.- Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարէն Ս. պատարագի ուղղակի ձայնագրում
- 12:30.- Զաղաքական լուրեր / հայերէն
- 1:00.- Ազգային - յեղափոխական երգեր
- 2:30.- Զաղաքական լուրեր / արաբերէն
- 2:45.- Յունարեւելեան օրէնսդրական բարեփոխումներու նոր թղթածրարին վաւերացումներ, բարեփոխումներ, որոնք կը սահմանափակեն բանակին հեղինակութիւնը Թուրքիոյ քաղաքական կեանքին մէջ:



Աստղիկ Չանքրըբընի պարգեւատրումը

եւստներու եւ մշակոյթի նուիրում հաստատութիւններու՝ ինքնապատկերը անոր հարստութիւնը: Գեղանի Էթիմէպեան թուեց Կիւլպէնկեան հաստատութեան շնորհիւ «ծնած» հայկական թէ օտար մշակութային գործունէութիւն ծաւալող կառոյցները, հրատարակութիւնները, գրական ամսագրերն ու գիտական կաճառները: «Այս գործունէութիւնը մեծապէս նպաստեց հայկական բարեփոխական ու մշակութային մասնագիտական աշխատութիւններու

**Haigazian University**  
Admission and Enrollment  
Fall 2003 - 2004

Now Accepting Applications!  
Undergraduate and Graduate Studies  
BA, BS, Teaching Diploma, MA & MBA

Haigazian University - Kantari, Hamra  
Tel.: 01-349230/1, 01-353010/1  
E-mail: admissions@haigazian.edu.lb  
Or visit us at: www.haigazian.edu.lb

*Valuing Higher Education*

**Մասնագիտութիւնը ՈՍԿԷ ԱՊԱՐԱՆՁԱԴ Ե ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ**  
դիմացող կը բանալ

Ա.- Համակարգիչի ԼԵՁՈՒՆԵՐ՝ եւ ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ մասնագիտութիւնը, ՊԵՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ:

Բ.- Ոսկերչութեան ու կաղապարաշինութեան վարպետ ըլլալու համար, տարիներ եւ շատ ճիշդ է պետք:

**ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ ամենակարճ ճամբան է այդ նպատակին հասնելու, առաւել՝ վկայեալ վարպետ ըլլալու համար:**  
Արձանագրութիւն՝ ամէն օր

**ՓՕԼԻԿԼՈԹ ՔՈԼԷՃ.- Տորա՝ հեռ. 01/251320**

**«ԱՉԳԱԿ» - ՄՐՅԱԼԸ**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՏԱՆ ՄՐՅՈՒՄ**

Ստորեկ կը ներկայացնենք «Ազգակ»-ի կազմակերպած ընդհանուր զարգացման մրցումին երկրորդ հարցարանը:

Այս հարցարանին 5 հարցումներուն ձիւղ պատասխանողներն փճակաձուլութեամբ պիտի ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրուս - Վառճա - Պէյրուս օդանաւային տոմսակ մը:

Իւրաքանչիւր մասնակից կրնայ խմբագրատուն ուղարկել միեւնոյն անունը կրող միայն մէկ կտոր:

Մրցանքին մասնակցելու համար պետք է օգտագործել «Ազգակ»-ի էջերուն մէջ տեղադրուած կտորներ եւ ոչ՝ լուսապատճեններ:

Հարցարանները պետք է լեցուին եւ խմբագրատուն ներկայացուի առաւելագոյնը Երկուշաբթի, 4 Օգոստոս 2003, երեկոյեան ժամը 18:00:

**ՀԱՐՑԱՐԱՆ ԹԻՒ 2**

- 1.- Ո՞ր աշխարհաճոյակ երաժիշտը յորինած է «1812»-ը:
- 2.- Ո՞ր երկիրը մեծագոյն բնակչութիւնը ունի:
- 3.- Ե՞րբ սպաննուեցաւ Միացեալ Նահանգներու նախագահ Ջոն Է. Բենետի:
- 4.- Անցեալ եղանակին (2002) ո՞ր խումբը հանդիսացաւ Հայաստանի ֆուտբոլի ախոյեան:
- 5.- Որքա՞ն է Լիբանանի տարածութիւնը:

ԱՆՈՒՆ.....  
ՄԱԿԱՆՈՒՆ.....  
ԸՆԴՀԱՆ ԹՈՒԿԱՆ.....  
ԸՆՈՒՄԱՅՆ ԹԻՒ.....

# ԲԱՅ ՆԱՄԱԿ ՍՐՏՅԱԻ ԴՐՈՇԱԿԻՐԻ ՄԸ

Միրելի՛ ընկ. Յ. Պալանյան,

Այս անգամ այ՛ «Ազդակ»-ի կայքէջին ճամբով, քանի՜ բերորդ անգամ ըլլալով հարողակից դարձալ սրտցաւ մտահոգութիւններուդ: Խօսքս կը վերաբերի «Ազդակ»-ի 29 Յունիսի համարին հարկ էջով տրուած «Լեզուական փնթիլութեան յանձնարարական լուծութիւն» յօդուածիդ:

Ի՛նչ մեղքս պահեմ. յօդուածը կարդալով, գլուխս ալ ու ձախ տարուբերեցի, երկու մտածումներով տարուած. առաջին մտածումս այն էր, որ «Գրական Թերթ»-ի աշխատակից Նազիկ Յովհաննէսեանի մատնանշումներուն արձագանգումովը, անգամ մը եւս կը փորձէիր լուսարձակի տակ բերել տասնամեակներէ ի վեր ոչ միայն քեզ մտահոգող տագնապ մը, որ կը բխի մայրենիին նահազարտ պահպանման նիւստի մարտնչութիւնէդ: Երկրորդ մտածումս եղաւ այն, որ արդեօք այս տագնապով մտահոգները սկսած են «վերջին Մոհիկան»-ի վիճակի՞ն մատնուիլ...:

Մտածումներս զիս առաջնորդեցին գրասեղանի, որպէսզի արձագանգուեմ արձագանգելով՝ փորձ ընեմ «լուս յանցագործ»-ի վիճակէն դուրս գալու, իմ կարգիս կատարելով որոշ մատնանշումներ, որոնք պատճառ կ'ըլլան հայերէն լեզուի անաղարտութեան նահանջին: Անմիջապէս աւելցնեմ, սակայն, որ այս փորձը սոսկ անպարտութեան վկայական առնելու մտահոգութեամբ չեմ կատարել, այլ կ'ուզեմ հաւատարիմ մնալ լեզուական մեր մշակութիւնի ակունքներուն: Թող այս տողները նաեւ չնկատուի «ես ա՛յ իմ պարտականութեան ըրի ու իրաւունք ունիմ խիղճս հանգստացնելու»-ի պէս բան մը:

Հաւանաբար միակը չեմ, որ գիրդ կարդալով՝ նմանօրինակ մտահոգութիւններով համարուած ըլլամ. գիտեմ, որ մայրենիին գուրգուրանքին նախանձախնդիր «խենթեր» չեն պակսիր քիչ մը ամէն տեղ՝ Հայաստան, Պէյրութ, Փարիզ կամ արեւմտեան կողմն աշխարհի: Նաեւ կը հաւատամ, որ այդ «խենթերը» կը գտնուին աւելի բարձր տեղ մը՝ քան այն անիմաստ բանավէճը, թէ արդեօք Մեքսիկայի ու Վրաստանի լեզուի անաղարտութիւնը, թէ՛ միւսը (չեմ արհամարհեմ այդ բանավէճին կարեւորութիւնը, առանց սակայն հրաժարելու մեր ուղղապարտութեան սկզբնաղբիւրէն), որովհետեւ լեզուի անաղարտութիւնը, կը հաւատամ, առաջնահերթ է ու կը հանդիսանայ մեր իւրայատուկ մշակութիւնի ողջաշարը: Եւ ողջասիւնին ամբողջութիւնը պիտի ծառայէ այլ ախտերու դարմանութիւն:

\* \* \*

Մենք՝ հայերս, կը դասուելիք շարքին այն ժողովուրդներուն, որոնք խօսակցական ու գրական լեզուն միեւնոյնն են, այսինքն՝ չունինք արարելէնին ստեղծած դժուարութիւնը (հոն կայ գրական լեզուն, որ հասարակած է Գուրլանը կարդացող բոլոր ժողովուրդներուն համար, նաեւ կայ խօսակցական լեզուն, որ կը տարբերի երկրի երկիր, այնքան մը, որ մարտքին կրնայ դժուարութիւն ունենալ հարողակիցելու իրաքցիին կամ Ծոցի երկիրներու իր լեզուակիցին հետ: Այս բերէնին այս առաւելութեան ընդհանրապէս չենք անդրադարձար, ու կը մոռանք, որ սա այլ կարելորդ գանձ է):

Մեր լեզուն, իր արեւելեան ու արեւմտեան ճիւղերով, ապրած է զուգահեռ զարգացում, սկսելով ԺԹ. դարու առաջին տասնամեակներէն (աւելի ետ չեմ երթար), շնորհիւ Հայ Դպրոցին ու Հայ Թերթին ժողովրդականացման: Անուանի ու անանուն քանի՜-քանի ուսուցիչներ, մտաւորականներ եւ լեզուագէտներ հոգի ու աչքի լոյս սպասած են ի խնդիր ՀԱՅԹԻՒՆԻ զարգացման ու մաքրագտման (ճիշտ այնպէս, ինչպէս կոմիտաս վարդապետը մաքրագտեց Հայ Երգն ու Երաժշտութիւնը. մեծ վարդապետին տարած գործին նկատմամբ մերօրեայ մեղանշումն այ ուրիշ պատմութիւն է անշուշտ): Արդեանէն մինչեւ Ռաֆֆի, Զարեմ, Սեւակ ու Սահեան, Իէթէն Պէրպէրեանէն մինչեւ Վարուժան, Սիւսանի, Ասատուր, Թէքեան ու Օշական, մեր լեզուին զարգացման ու հզորացման դրօշաւաւը շարունակուած է սերունդէ սերունդ: Աչքաթող չեմ ընել հայրենի մտաւորականութեան այն ճիւղ ու կոթողական աշխատանքը, որ թափ ստացաւ 60ականներուն ու արժանի քրտինք հոսեցուց լեզուաբանութեան կաճառի մակարդակին վրայ, երբ այսօրինակ հարցեր շատ աւելի լուրջ պատճառներ ունէին քաղաքական պրիսմակով դիտուելու, եւ սակայն ճշմարտութեան հետեւորդները ըսին իրենց խօսքը:

Այս բոլորը իրականացան, ինչպէս նշեցի, անուանի ու անանուն բազմաթիւ երախտաւորներու շնորհիւ, որոնք արդար անհրաժեշտութեամբ, լեզուական մաքրամաքրութեան ու նոր նուաճումներու խանդով կրեցին դրօշը, զայն հասցնելով մինչեւ այսօրուան սերունդներուն:

Եւ օր մըն այլ յանկարծ... աշխարհը սկսաւ աւելի արագ թաւալիլ ու փոփոխութեան ենթարկել արժեքներ, սքողելով այն իրականութիւնը, որ մնալուն արժէքները անփոփոխին են ու ժողովուրդներու հաւաքական հարստութեան գանձարանին կը պատկանին:

Նահանջի մատնուեցան կրթօճախները, մամուլն ու տպագիր մշակոյթը՝ առհասարակ, իրենց հետ ետդարձի տանելով շատ բան:

Կրթական մեր հաստատութիւնները, Միջին Արեւելքէն մինչեւ սփիւռքեան այլ ափեր, պարտադիր տեղատուութեան մատնուած են յատկապէս վերջին երկու տասնամեակներուն: «Հայերէնը փոր չի կշտացնել»-ը դարձած է ծնողներու եւ մինչեւ անգամ որոշ պատասխանատուութիւններ ունեցող շրջանակներու ինքնապշտպանութեան վահանը, տարբերութիւն չէր տուութիւնը՝ իբրեւ թէ արդարացող զէնք մը, «հայերէն չգիտնալը լաւ հայ չըլլալու չափանիշ է» պատճառաբանութիւնը՝ ինքնախաբէսութեան կամ ջալլամի վարքագծի արտայայտութիւն: Դու, որ Ծրարնա կ'ապրիս (կամ՝ աշխարհի տարբեր երկիրներու մէջ ապրող ու տարբեր ժողովուրդներու դրացի հայեր), երբեւիցէ լսած ես Ֆրանսացիէ մը (կամ այլ ժողովուրդի մը գաւակէն), թէ իր լեզուն «փոր կշտացնելու միջոց» է: Մարդ իր լեզուն չի սորվիր, գայն չի պահպանել փորին համար, այլ այդպէս կ'ընէ՝ որովհետեւ հայ, անգլիացի, ֆրանսացի, իտալացի՝ կամ գերմանացի՝ ծնած է ու հպարտ է իր ազգութեամբ (Աստուած հոգին լուսանորէ խնայողը Արժուանին, որ մեր գարթօնքի առաջին օրերուն, մայրենիին փառաբանանքը կատարող առաջին դրօշակիրը եղաւ: Վստահ եմ որ օտար բառերու օգտագործման ուղղուած ակնարկութիւնը, նաեւ՝ նազիկ Յովհաննէսեանի ակնարկութիւնը, Արժուաններու նման գրողներու չի վերաբերիր, որովհետեւ անոնք լաւ հայերէն գիտնալով հանդերձ, նախընտրեցին ժողովուրդին լեզուով գրել, յստակ նպատակ մը իրագործելու համար: Այսօր ոչ ոքի թոյլատրելի է քալել Արժուանի այս հետքերով): Այս «փոր չի կշտացնել»-ի տեսութիւնը այնքան ընդարձակ հող չհաճած է, որ մինչեւ անգամ հայերենամերձ երկիրներու մէջ դարձած է Հայ Դպրոցին պլուստը թշնամիներէն մէկը, «ներքին» ու «արտաքին» ճակատներու վրայ:

Ներքին՝ ճակատ» ըսելով՝ կը հասկնամ գոնէ երկու բան. նախ՝ հայերէն լեզուով աւանդուող դասանիւթներու նկատմամբ նուազ հոգածութիւն (որ երբեմն կը հասնի անփութութեան ոլորտներուն), ապա նաեւ՝ մասնագէտներու մեկուսացումը՝ հայերէնով աւանդուող դասանիւթներէ (այդ դասանիւթներուն համար դպրոցներ չեն ուզեր աւելի եւս ծանրաբեռնել իրենց արդէն իսկ տաճարի մատնուած պիւտեճները, ու բոլորէն առաջ հայերէնը ուսուցիչին կը պահանջուի թէ՛ նիւթական, թէ՛ ժամանակի զուհուողութիւն, իսկ այդ բոլորին դիմանալու կարճատեւ արհամարհող վերաբերմունք (բարեբախտաբար բացառութիւններ այլ կան): Դուք պէտք է յիշէք, թէ երբ աշակերտ էիք, դուք եւ ձեր ծնողները, ձեզի սերնդակիցներու ծնողները ինչպիսի՜ յարգանք ու ակնածանք կը ցուցաբերէին հայերէնի ուսուցիչներուն հանդէպ, ինչպէ՛ս կը գուրգուրային անոնց վրայ, որովհետեւ... ձեր ծնողները մաս կը կազմէին ա՛յն սերունդին, որ Յեղապահին սուղ վճարք իր ազգային արժեքներուն, նաեւ սեփական հաւատքի ու մշակոյթի արժէքներուն պահպանման համար: (Թող Աստուած հեռու ընէ ամէ՛ն տեսակի ցեղասպանական արարք...): Եւ այդ ուսուցիչները կ'արժեքնէին իրենց հանդէպ ցուցաբերուած յարգանքն ու գուրգուրանքը:

Իսկ «արտաքին ճակատ» ըսելով կը հասկնամ հայկական վարժարաններ յաճախող աշակերտներու թիւին նուազումը: Ամէնէն հպանցիկ վիճակագրութիւններն անգամ այսօր անգամ կը հնչեցնեն այս իմաստով: Ծանրամեակներու առաջ, միջին արեւելեան երկիրներու մէջ Հայ ծնողներ ամօթ ու ազգային արժանապատուութեան հասնող վիճակներ կը համարէին իրենց գաւակները օտար վարժարաններ զրկելը (կարգ մը մեկուսի ու փոքրաթիւ գաղութներու մէջ այս վարքագիծը կ'ապրի տակաւին): Պետական դպրոց յաճախողներուն թիւը «մատի վրայ կը համարուէր»: Հեռաւոր ափերու վրայ, Հայ Դպրոցի չզոյլութիւնը տասնամեակներ առաջ գործի մղեց կարգ մը «խենթեր», որոնք կազմեցին փորձ ձեւազնդակ մը ու սկսան զայն զլորել, ծաւալ տան: Այսօր, սակայն, պատկերը տխուր երես մը ունի քիչ մը ամէն տեղ: Հայկական վարժարանները յայտնապէս չեն կրցած քայլ պահել ժամանակին հետ ու այսօր չեն կրնար իրենց յարկներու տակ պարփակել բոլոր հայ աշակերտները, որոնք «արտասօքը» բնականաբար իր բաժինը ունի հայկական վարժարաններու պիւտեճական հարցերուն մէջ: Մէկ խօսքով, ստեղծուած է փակ օղակ մը, զոր պէտք է քանդել ստեղծանաբար:

ՄԱՍՈՒՐԸ եւ առհասարակ հրատարակչական ասպարէզը կ'ապրի ի՛ր «ներքին» ու «արտաքին» տագնապները:

«Ներքին» ըսելով կը հասկնամ Հայ խմբագիր տարրին տեղատուութիւնը: Անցեալին, խմբագիրը նախ եւ առաջ լեզուին քաջածանօթ էր ու ասպարէզին բերումով անոր կը տիրապետէր ժամանակի ընթացքին (խօսքս չի վերաբերի անուղղաներուն, որոնք իրենց կողքին միշտ ալ կ'ունենային գիտակից հոգածուններ): Թերթի մը մէջ լեզուական սխալ մը անհանդուրժելի ու աններելի մեղք էր, հակառակ անոր, որ թերթ հրատարակելը, սրբագրումի իմաստով, միշտ ալ ապերախտ գործ եղած է, այն առումով, որ լիակատար սրբագրումը գրեթէ անկարելի բան է տուեալ ժամանակամիջոցին: Թերթին աշխատակիցը միշտ ալ իր ուսին վերեւ կը զգար լեզուագէտ խմբագիրին, երբեմն նաեւ լեզուագէտ գրաշարին (յարգանք գրաշարներու այդ սերունդին), անգամ չէնք որ ընթացողին զգաստացնող շուքը: Այսօր, նման արագիւրներու եւ աշխատակիցներու թիւը չնչին է: Թերթ մը կրնայ մամուլին յանձնուել մինչեւ անգամ առանց լեզուական սրբագրումի: Բնականաբար հոս ալ կան բացառութիւններ, որոնք, իրենց կարելի, կը սահին դէպի «մոհիկանութիւն»:

Իսկ «արտաքին» ըսելով՝ կը հասկնամ արդի արհեստագիտութեան պարզեւած փնթիլութիւնը (այս բառն ալ քեզմէ փոխ կ'առնեմ):

Նկատած ես, չէ՞, որ համակարգիչ մը ու սպիւն մը (printer) ձեռք բերողը, քիչ մըն ալ չհարողում սորվողը դարձած է թերթի ու գիրքի հրատարակիչ: Համակարգիչի դարաշրջանէն առաջ, գիրք մը հրատարակելու ուղղը նախ ձեռագիրը լեզուական սրբագրումի ենթարկելու տար խմբագիրի մը, ուսուցիչի մը կամ լեզուագէտի մը, յետոյ կը դիմէր հրատարակչատու-ուսպարան մը, որ նմանապէս նախանձախնդիր հոգածութիւն կը ցուցաբերէր ծնելիք մանուկին նկատմամբ: Եթէ հրատարակած գիրքին մէջ սխալներ «փախէին», գիրքին վերջաւորութեան կ'աւելնար վրիպակներու ցանկ մը (երբեմն առանձին թղթիկի մը վրայ): Հայաստանի մէջ կը կարդայինք անուր զայն լեզուական մշակումի ենթարկող խմբագիրին, որ տարբեր կ'ըլլար գլխաւոր խմբագիրէն: Այլ խօսքով, «հին, լաւ օրերուն», Հայաստանի մէջ թէ՛ սփիւռքի՝ կային արհեստավարժ կամ սիրող (ամաթօր) սրբագրողներ, որոնք նախանձախնդիր էին մամուլին տակէն դուրս եկող թերթին կամ գիրքին լեզուին անաղարտութեան (պատահաբար կը յիշեա այն ծինարկի փոթորիկը, որ 60ականներու վերջերսին թէ՛ 70ականներու սկիզբներուն պայթեցաւ «Ազդակ»-ի էջերուն, երբ յօդուածագիր մը «Աքիլլէսի Կրունկ»-ը գրած էր Թառով, ու յանդիմանական նամակ-բողոքագիր մը յղած էր խմբագիրին, որովհետեւ ան իր պարտականութիւնը կատարած էր ու կոտրած էր Աքիլլէսի թուիչը):

Հիմա, «դարձ փոխուած է»: Համակարգիչ մը ունենալը արդէն շատերը կը վերածէ հրատարակիչի (թերթի կամ գիրքի): Թերթի անկախ, գիրք հրատարակելու ուղղը ուղղակի կը դիմէ նման հրատարակիչներու, որոնք համար գիրք ըսուածը էջերու թիւ է, այսինքն՝ թուղթի, մեյքի, տպագրական այլ անհրաժեշտութեանց զինքը ունի (հեղինակ դառնալն ալ դիւրացած է նոյն տրամաբանութեամբ), դիմէ նման հրատարակիչի մը, որ պատրաստ է գիրքը գրաշարելու եւ տպելու ամէնէն աժան միջոցներով: Եթէ «Փարիզ» բառը տեղ մը Բենոկ գրած ես, ուրիշ տեղ՝ Փիւրով, հրատարակիչին համար երբեք տարբերութիւն չ'ընեն, այդպէս ալ կը պահէ: (Երկու տասնամեակ առաջ, խուճար մը տղաք գիրք հրատարակեցին նաեւ այն տրամաբանութեամբ, որ սխալներ ընելը հոգեբանական-բնագիտական պատճառներ ունի, հետեւաբար արտօնելի է, ուրեմն՝ ընագիր մը պէտք է սրբագրումի ենթարկուի. մինչեւ իսկ գրաշարական սխալները կը բացատրէին այս «տեսութեամբ»): Այլ ի՛նչ խօսք լեզուական սխալներուն, կամ՝ արեւելեան սերնդի ու արեւմտահայերէնի խառնուրդով ստեղծուած «նոր լեզու»-ին մասին, որ սկսած է այնպէս «բնական լուծում»-ի առաջնորդել երկու ուղղագրութիւններուն շուրջ բանավէճը...:

\* \* \*

Հայրենի մամուլին էջերը օտարաբանութիւններով ողողող յօդուածագիրներուն ընթացքը արդարօրէն զարդար չ'ապտուածած է նազիկ Յովհաննէսեանին, որուն արձագանգած է իր յիշեալ յօդուածովդ: Մտահոգութիւնը նորութիւն չէ. նման մտահոգութիւն բարեբար հոլովոյթի մը ծնունդը տուաւ 70ականներուն ու հայերէնի բառարանները հարստացան հայունը զանազանով: Այսօր ալ նման լուրջ մօտեցում ու աշխատանք հրամայական է, ու մեծ ճիգ ալ չի պահանջուի: Կը հաւատամ, որ նման օտարաբանութիւններ օգտագործողները ըստ բաւականին քաջածանօթ են մեր լեզուին. կը մնայ, որ տարօրինակ սովորմանութեան վերջ տրուի ինքնակամ ու ինքնագիտակից կերպով: Թող մանկունակ կամ քիչ է:

մտածում չնկատուի՝ եթէ դարձեալ դիմենք անմահ Արքայանի յորդորին, ըստ որուն՝ լաւ բան է բազմաթիւ լեզուներ գիտնալը, սակայն լաւ չէ զանոնք իրարու խառնելով արտայայտուելն ու գրելը, որ համարօք է քանի մը համով սննդանիւթեր միախառնելով ճաշակել փորձելու:

Նմանապէս, անյետաձգելի է արտերկրի հայ դպրոցին ու հայ մամուլին վերաբերելու մը, որ շատ աւելի դժուար առաքելութիւն է, քան վերոյիշեալը: Այս կալուածին մէջ շատ հարցեր լուծող բանալին՝ նիւթական միջոցներու ապահովումը կրնայ ինքնաբերաբար լուծման առաջնորդուել, եթէ համաշափօրէն նախանձախնդրութիւն ցուցաբերուի զոյգ կալուածներուն նկատմամբ, արհեստավարժական ու բազմակողմանի ծրագրումով:

Այս առաջադրանքին իրականացման համար, պէտք ունինք բոլոր ձեռքերուն մէկտեղման: Միայն քանի մը վարժարաններու, միայն քանի մը թերթիներու կամ հրատարակչատուներու նախանձախնդրութեամբ մօտեցումը բաւարար չէ: Հոգածու մօտեցումն ու մանաւանդ նախանձախնդիր աշխատանքը պէտք է տարածուի հորիզոնական եւ ուղղահայեաց գիծերու վրայ, պարփակելու ու ծածկելու համար մեր մշակութային կեանքին ամբողջ դաշտը, սկսելով ծնողներէն ու անցնելով մեր բոլոր կազմակերպ կառոյցներէն:

Կը հաւատամ, որ նման աշխատանք այսօր չ'ա՛տ աւելի դիւրութեամբ կրնայ յաղորդութեան հասնել, քան ինչ որ վիճակուած էր Զարթօնքի հետեւին կամ անոնց ժառանգորդ-հետեւորդներուն, որովհետեւ ունինք անոնց փորձառութեան պտուղները, բայց մանաւանդ արդի աշխարհին ընձեռած մեծ առաւելութիւնները:

Կը հաւատամ նաեւ, որ նման աշխատանքի թափ տուողները պիտի արժանանան «շափօ »-ի: (Ներողութիւն՝ Ֆրանսեանի բառին համար, սակայն երբեմն ալ նման օտարաբանութիւններ «համով կը փախին»):

Հաւատակից մը  
Ս. ՄԱՀՍԵՒԷՆԵԱՆ

## ՏՈՀՄԻԿ ԱՐՈՒԵՍԸ ՊԱՀՈՂ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Ազգային թէ տոհմիկ աւանդութիւնները պահպանելու կոչուած են մեր կառույցները, մասնաւորաբար՝ մշակութային ուրոյն հարստութիւններու փոխանցման համար: Նոր սերունդին պիտի փոխանցուին մեր սեփական գանձերը, որպէսզի յարատեւէ ու գոյատեւէ մեր կորսնցուցած հողերէն ու միջավայրէն ծնած դարերու ժառանգ ու թիւնը:



Որդւոց որդի փոխանցուող այս նուիրական կտակը ունի իր բազմազան երեսները՝ սկսելով սննդական մարզէն, ճաշերու տեսականիէն, իւրաքանչիւր քաղաքի կամ գաւառի դիմագրային յատկանիշը եղող մշակութիւն մինչեւ գաւառաբարբառային հարստութիւնը: Յաւօք սրտի կորսնցուցած ենք մեր գունազեղ մշակութիւն մաս կազմող գանձերը, այժմ կը վանանք պահել մնացածը՝ ձեռնային արուեստ ըլլայ թէ ինքնութիւն մատնանշող որեւէ երեւոյթ:

Այս տեսլականով ճամբայ ելած է Մարաշի Հայրենակցական Միութեան Լիբանանի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութիւնը վայելող Տիկնանց Յանձնախումբը, որ կազմակերպած է Մարաշի նախընտրուող ուսուցումը, միութեան Նոր Մարաշի տան մէջ: Ուսուցանողները մարաշցի կիներ են, որոնք ոչինչ կը խնայեն Նոր սերունդին փոխանցելու իրենց մայրենի ու մեծ մայրերէն սորված ձեռնային այս արուեստը, իւրայատուկ ձեռագործը, որ ծանօթ է Մարաշի նախնականներին:



Մեր նկարը ցոյց կու տայ յիշեալ դասընթացի հետեւող պարմանուհիներու խումբ մը:



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

### ՈՒԱՇԻՆԿԹԵՆԻ ՄԷՉ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿԻ ԿԱՅՔԸ




Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Համար կենսական ընդթիվ ունի տեղեկատվության մարզը: Արդարեւ, ճանաչում է եւ ինքնորոշման իրաւունքի համար պայքարող Արցախը այնքան կարիք ունի քարոզչութեան եւ դիւանագիտութեան, որքան՝ իր խորիստ քանակին եւ ազատամարտիկներուն: Այս առումով ողջունելի է Ուաշինգթոնի մէջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցչութեան պաշտօնական կայքը (անգլերէնով), որ առանձին բաժիններ տրամադրած է Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան, տնտեսութեան, Լեռնային Ղարաբաղի տազնապին եւ մարդասիրական օգնութեան կարիքներուն: Կայքը նաեւ կ'ընդգրկէ «Արցախի բարեկամներ», «Արցախը՝ Համացանցին վրայ», «Լուսանկարներ» եւ «Լուրեր» խորագրեալ բաժինները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը օտարներուն ծանօթացնելու միտող այս կայքը ողջունելի նախաձեռնութիւն մըն է, եւ յոյսով ենք, որ ան կը դառնայ վարակիչ:

Կայքին հասցէն է [www.nkrusa.org](http://www.nkrusa.org)

## «ԱՓԸԼ ԱՅՓՈՏ»Ի ՆՈՐԱԳՈՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ



«Ափըլ» ընկերութեան «Այփոտ» անունով «էմ. ֆի. 3 փէյլը»-ի առաջին տարբերակը մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ աշխարհի տարածքին, իր իւրաքանչիւր ձեւաւորումին եւ բազմազան երգեր ամբարեւելու կարելիութիւններուն համար:


Վերջերս հրատարակուեցաւ «Ափըլ Այփոտ»-ի նորագոյն տարբերակը, որուն կառոյցը առաջինն աւելի բարձր է, եւ կոճակները դարձած են աւելի գործնական: Այս սարքը կարելի է միացնել որեւէ համակարգիչի եւ անկէ արձանագրել որեւէ «էմ. ֆի. 3» ֆայլ: Ինչ կը վերաբերի սարքի ձայնային որակին, մասնագէտներ դիտել կու տան, թէ «Այփոտ»-ի ձայնային որակը գերազանց է եւ ցարդ՝ անկրկնելի: Սարքին միջոցով կարելի է նաեւ «թեքսթ ֆայլ»-ը կարգալ եւ ելեկտրոնային խաղեր ըմբռնել:

15 կիկապայթ ծաւալով «Ափըլ Այփոտ» կը քննադատուի զվաւերաբար իր գինին համար (աւելի քան 500 տոլար), տրուած ըլլալով, որ իր մրցակիցը՝ «Քրիէյթիւ 2էն» 20 կիկապայթ ծաւալ ունի եւ կը վաճառուի նոյն գինով: Սարքին մասին յաւելեալ մանրամասնութիւններ կարելի է գտնել [www.apple.com](http://www.apple.com) հասցէով կայքին մէջ:

## ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

### «ԷՄ. ԷՍ. ԷՆ. ՄԵՍԵՆՃԸՐ 6»

Համացանցի միջոցով հաղորդակցութիւնը երկար ճամբայ կտրած է: Սկիզբն էին ե - նամակը եւ ֆորումները: Ապա գարգացան ուղղակի զրոյցի ծրագրերը, ինչպէս՝ Այ. Ար. Սի. դրութիւնը: Սակայն զլիսաւոր յեղաշրջումը հաղորդակցութեան աշխարհին մէջ եկաւ «ինսթընթ մեսենճըր» ծրագրի ներդրումը: Այսպէս, «Այ. Սի. Քի.», «էմ. էս. էն. Մեսենճըր», «Ես. Օ. էլ.» առիթը ընծայեցին բազմամիլիոն անհատներու, որ հաղորդակցութեան մէջ մտնեն աշխարհի որեւէ անկիւնը գտնուող հարազատներու եւ բարեկամներու հետ, ինչպէս նաեւ ծանօթանան իրենց հետաքրքրութիւնները բաժնող անձերու հետ եւ գտնեն իրենց



լու աստիճան սուր է: Իւրաքանչիւր ծրագրի պատասխանատու մարմինները կ'ընեն իրենց կարելին եւ անկարելին՝ ընդարձակելու համար ծրագրիին հասողութեան ծիրը եւ

ամիս) չ'անցնիր առանց այս ծրագրիներուն նորագոյն եւ նորանոր կարելիութիւններով հարուստ տարբերակի մը հրատարակումին:

Այս իմաստով, Յունիսէն Օգոստոս երկարող ժամանակաշրջանը «Մայքրոսոֆթ»-ի «էմ. էս. էն. Մեսենճըր 6»-ի ստեղծած խանդավառութեամբ կը յատկանշուի: «էմ. էս. էն.»-ի այս նորագոյն տարբերակը իր նորութիւններով կ'ընայ խանդավառ անգամ մէկն էն անտարբեր անձը:

Ծրագրը, զոր կարելի է արձանագրել [www.messenger.msn.com](http://www.messenger.msn.com) կամ [www.download.com](http://www.download.com) հասցէով կայքերէն, առիթը կ'ընեն ֆայլերու փոխանակումի, լուսանկարներու գետեղման, ուէպէժ մի օգտագործման, ինչպէս նաեւ կ'ընդգրկէ «էմթի-կոն»-ներու ընդարձակ հաւաքածոյ մը:

Ֆայլերու փոխանակումի բաժինը կը յատկանշուի այն իրողութեամբ, որ կարելի է առաջել եւ ստանալ ոչ միայն լուսանկարներ, այլ նաեւ՝ «էմ. ֆի. 3» կամ որեւէ տեսակի այլ ֆայլեր: «Ուէպէժ»-ի օգտագործումի պարագային յատուկ պատուհան մը կը բացուի, ուր կարելի է տեսնել ձեր խօսակիցը, իսկ երկրորդ պատուհան մը, ուր կ'երեւի ձեր ուէպէժի կատարած վիտէօ նկարահանումը. այսպիսով, եթէ ենթական նկատէ, թէ տուեալ անկիւնէ մը իր պատկերը այդքան ալ տպաւորիչ չէ, կ'ընայ փոխել վիտէօ - քամերային անկիւնը: Ծրագրը նաեւ կարելիութիւն կ'ընեն ձեր ձայնային միջազգային հեռաձայնային կապ հաստատելու:


«էմ. էս. էն. Մեսենճըր 6» կը հանդիսանայ ծրագրի մը, որուն կարողականութիւնը հասկնալու լաւագոյն ձեւը զայն օգտագործելն է:

«Լեզուն պաշտպանելը բնական երեւոյթ է, սակայն «ի - մէյլ»-ը այնպէս մը թափանցած է մեր լեզուամտածողութեան մէջ, որ ոչ ոք զայն ամերիկեան բառ կը նկատէ», աւելցուց ան:

## ՖՐԱՆՍԱ Կ'ԱՐԳԻԼԷ «Ի-ՄԷՅԼ» ԲԱՌԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ֆրանսայի կառավարութիւնը «երթաս բարով» ըսաւ «ի - մէյլ»-ին եւ բարի գալուստ մաղթեց «բուրի էլ»-ին (courriel):

Արդարեւ, Ֆրանսայի մշակութիւնը նախարարութիւններուն եւ պետական կառոյցներուն փաստաթուղթերուն, հրատարակութիւններուն



եւ համացանցի կայքերուն մէջ:

Ֆրանսայի նոր օտար եւ յատկապէս անգլերէն բառերու եւ եզրերու ներթափանցումին դէմ պաշտպանելու ծիրին մէջ կատարուած այս միջոցառումը խառն զգացումներով դիմաւորուեցաւ:

Ֆրանսայի մշակութիւն նախարարութեան լեզուական հարցերու յատուկ մէկ յանձնախումբին համաձայն, համացանցը օգտագործող ֆրանսացիներ արդէն լայնօրէն կ'օգտագործեն «Քուրիէ էլէքթրոնիք» (courrier électronique) եզրը՝ անգլերէն «ի - մէյլ» բառին փոխարէն: «Քուրիէլ» պարզապէս կը ճանաչուի է այս եզրին եւ յաճախ օգտագործուած բառ է ֆրանսախօս քեպէժ-ցիներուն մօտ:

«Աքստէմի Ֆրանսէզ»-ի հետ կապեր ունեցող լեզուական հարցերու յանձնախումբին այս քայլը բոլորին ծափողջոյններուն չարժանացաւ: Համացանցի եւ տեղեկատուական արհեստագիտութեան կարգ մը մասնագէտներ բառը նկատեցին «չինձու» եւ «կեղծ» շեշտելով, որ ան տարածում չէ գտած հանրութեան մէջ: Ֆրանսական «համացանցի ակումբ» ընկերութեան նախագահ Մարի - Քրիսթին Լըվէ ըսաւ «Քուրիէլ» բառը չ'օգտագործուիր, ի - մէյլը մեր արժէքներուն մէջ թափանցած է:

«Լեզուն պաշտպանելը բնական երեւոյթ է, սակայն «ի - մէյլ»-ը այնպէս մը թափանցած է մեր լեզուամտածողութեան մէջ, որ ոչ ոք զայն ամերիկեան բառ կը նկատէ», աւելցուց ան:




կեանքի ընկերը...

«Ինսթընթ Մեսենճըր»-ի վերոնշեալ չորս ծրագրերուն միջեւ մրցակցութիւնը անհատալի ըլլա-

նախասիրած ծրագիրը դառնալու համար առաւելագոյն թիւով մարդոց: Այս ծիրին մէջ, տարի մը (չըսելու համար քանի մը

## ԱՆԳԼԻՈՅ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԸ՝ ՀԷՔԸՐՆԵՐՈՒ ԹԻՐԱՆ




«Ելեկտրոնային աշխատակիցներ» եզրը վերջին տասնամեակին յաճախ կ'օգտագործուի իբրեւ անկարկութիւն՝ հէքըրներու եւ աքթիվիստներու կողմէ համացանցի կայքերու եւ սերվերներու վրայ շղթայագրածուած յարձակումներուն:

«Աշխատակիցներ» բառի գործածութեան եւ շահագործումի այս օրերուն ելեկտրոնային աշխատակիցներ նկատմամբ խիստ մօտեցումը նոյնպէս շեշտուած է, եւ «հէքիվ»-ի գործողութիւններ կանխարգիւելու համար խիստ միջոցառումներուն կը դիմուի:

Սակայն այս բոլորը արգելք չի հանդիսանար քաղաքական պատգամ մը փոխանցելու ուղղ հէքըրներուն, որ յաջողին թափանցել ամէնէն ապահով նկատուող համացանցի կայքերուն մէջ: Անոնց նորագոյն գոհերէն մէկը Անգլիոյ Աշխատանքային կուսակցութեան պաշտօնական կայքէն է՝ [www.Labor.org.uk](http://www.Labor.org.uk): Հէքըրներ յաղորդած են մուտք գործել կայքին մէջ եւ այնտեղ տեղադրել նկար մը, ուր Անգլիոյ վարչապետ Թոնի Դեյլը կը ներկայացուի իբրեւ ձորձ Պուշին... շունը: Քանի մը ժամ ետք կայքի պատասխանատուները յաղորդած են վերցնել այդ անարգական պատկերը...

## ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### «ԱՅՓԹԷՔ» ԳՐՊԱՆԻ ՎԻՏԷՕ - ՔԱՄԵՐԱՆ




